

Հաստատված է գիտական  
խորհրդի N 16 նիստում  
28.11.2018 թ.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և

ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### **Ընդհանուր դրույթներ**

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Համալսարանի ռեկտորին կից և անմիջական ենթակայությամբ գործող կառույց է:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են Կենտրոնի գործունեության կանոնները:

3. Կենտրոնը իր գործունեությամբ առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Կառավարության որոշումներով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով, սույն կանոնակարգով, ոլորտը կարգավորող ընթացակարգերով և այլ իրավական ակտերով:

**Կենտրոնի նպատակներն ու խնդիրները**

4. Կենտրոնի քաղաքականությունն ուղղված է.

ա) համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետության և որակի բարձրացմանը,

բ) երաշխավորել շնորհվող որակավորումների համար բարձրագույն կրթության ազգային չափորոշիչների ապահովումը,

գ) ապահովել ուսման վերջնարդյունքների վրա հիմնված որակյալ կրթական համակարգ,

դ) ապահովել բուհի հաշվետվողականությունը, գործընթացների թափանցիկությունը, տեղեկատվության հասանելիությունը ուսանողներին և գործատուներին՝ ուսման որակի ապահովման նպատակով,

ե) երաշխավորել շահառուների բավարարվածությունը,

զ) նախապատրաստել համալսարանն ու կրթական ծրագրերը որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,

է) խթանել բուհում որակի ապահովման մշակույթի զարգացումը:

5. Կենտրոնի հիմնական խնդիրներն են.

ա) ապահովել կրթական ծրագրերի մշտադիտարկումը, պարբերաբար վերանայումն ու կատարելագործումը,

բ) նպաստել կրթական ծրագրերի ինքնագնահատման և արտաքին գնահատման ու հավատարմագրման գործընթացներին,

գ) կազմել որակի ապահովման համար բուհի հաշվետվողականության ընթացակարգեր,

դ) նախաձեռնել որակի ապահովման համար բուհի հաշվետվողականության գործընթացներ,

ե) երաշխավորել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը,

զ) ապահովել որակի ներքին գնահատման գործընթացում ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությունը,

է) առաջարկել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ՝ ուսման որակի շարունակական բարձրացման համար:

### **Կենտրոնի հիմնական գործառույթները**

6. Մշակել ԵՊԲՀ կրթության որակի ապահովման կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթեր:

7. Մշակել և ներդնել կրթության որակի ներքին ապահովմանն ուղղված գործիքներ և գործիքակազմեր:

8. Իրականացնել համալսարանի կրթական գործընթացների համակողմանի ուսումնասիրություններ:

9. Իրականացված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել շահակիցներին (համալսարանի վարչակազմ, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ, արտահամալսարանական կառույցներ):

10. Պարբերաբար վերանայել և բարելավել կրթության որակի ապահովման գործընթացները:

11. Համակարգել համալսարանում գործող կրթության որակի ապահովմանն ուղղված այլ կառույցների և/կամ այս ուղղությամբ գործունեություն ծավալող աշխատակիցների աշխատանքը:

12. Ապահովել տեղեկատվական բավարար հիմքեր կրթության որակի արտաքին գնահատման գործընթացների համար:

### **Կենտրոնի ղեկավարումը**

13. Կենտրոնի ղեկավարումը իրականացնում է կենտրոնի ղեկավարը: Կենտրոնի ղեկավարին աշխատանքի է ընդունում և ազատում համալսարանի ռեկտորը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Կենտրոնի աշխատակազմը

14. Կենտրոնում առկա են կենտրոնի ղեկավարի, ղեկավարի տեղակալի և ավագ մասնագետների հաստիքներ:

Կենտրոնի ղեկավարի, ղեկավարի տեղակալի և ավագ մասնագետների գործառույթները և ներկայացվող կրթական և մասնագիտական պահանջները սահմանվում են սույն կանոնակարգով:

15. Կենտրոնի ղեկավարը՝

ա) մշակում է ԵՊԲՀ կրթության որակի ապահովման կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթեր,

բ) մշակում է ուսման որակի ապահովման գործիքակազմ, ընթացակարգեր և գործընթացներ,

գ) ապահովում է վերը նշված ընթացակարգերի ներդրումը ուսումնական համակարգում,

դ) մասնակցում է ԵՊԲՀ կառուցվածքային և ծրագրային հավատարմագրման գործընթացներին,

ե) համակարգում է տարբեր ստորաբաժանումների ինքնագնահատման գործընթացները,

զ) ապահովում է կրթական գործընթացների մշտադիտարկումը,

է) ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի գնահատումը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,

ը) պատրաստում է որակի ապահովման ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման

համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը ԵՊԲՀ բոլոր ստորաբաժանումներում,

թ) ապահովում է որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը, դրանցում շահակիցների լայնածավալ ընդգրկվածությունը,

ժ) կենտրոնի աշխատակիցների միջև կատարում է աշխատանքի բաժանում և ապահովում դրանց կատարումը,

ի) ապահովում է ՀՀ օրենսգրքի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների, համալսարանի ներքին կարգապահական կանոնների, այլ կանոնակարգերի, ռեկտորի հրամանների և հանձնարարականների կատարումը,

լ) պատասխանատու է կրթության որակի գնահատման և ապահովման գործընթացների, գիտական խորհրդում ընդունված որոշումների կատարման համար,

խ) շահակիցների տեղեկացվածության բարձրացման նպատակով կազմակերպում է աշխատաժողովներ, քննարկումներ, վերապատրաստումներ,

ծ) համակարգում և օժանդակում է կրթության որակի ապահովման գործընթացները համալսարանի բոլոր ստորաբաժանումներում,

կ) ապահովում է Կենտրոնի աշխատակիցների մասնագիտական շարունակական զարգացումը,

հ) ապահովում է կենտրոնի հաշվետվողականությունը,

ձ) ապահովում է որոշ պետական և միջազգային կառույցների հարցմանն ի պատասխան տեղեկատվության տրամադրումը:

Կենտրոնի ղեկավարը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճանով և կրթության կազմակերպման կամ կառավարման ոլորտում 5 տարվա աշխատանքային ստաժ:

16. Կենտրոնի ղեկավարի տեղակալը՝

ա) աջակցում է Կենտրոնի ղեկավարին վերը նշված բոլոր գործառույթների իրականացման գործընթացում,

բ) կենտրոնի ղեկավարի հանձնարարությամբ համակարգում և կազմակերպում է շահակիցների շրջանում անցկացվող հարցախույզերն ու այլ հետազոտությունները,

զ) մասնակցում է կրթության որակի ապահովման նոր գործիքակազմերի և ընթացակարգերի մշակման աշխատանքներին,

դ) կենտրոնի ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում և համակարգում է այլ ստորաբաժանումների հետ հանդիպումներ, ֆոկուս-խմբային աշխատաժողովներ,

ե) կազմում է հաշվետվություններ,

զ) հաշվետու է կենտրոնի ղեկավարին:

Կենտրոնի ղեկավարի տեղակալը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճանով և կրթության կազմակերպման կամ կառավարման ոլորտում 3 տարվա աշխատանքային ստաժ:

17. Կենտրոնի ավագ մասնագետը՝

ա) իրականացնում է տվյալների հավաքագրում և մուտքագրում,

բ) կատարում է տվյալների վիճակագրական մշակում և վերլուծություն,

գ) մասնակցում է իրականացվող հետազոտություններին, շահակիցների շրջանում անց է կացնում հարցախույզեր,

դ) ապահովում է մշտական կապ արտաքին և ներքին շահակիցների միջև,

ե) մասնակցում է կրթության որակի ապահովման գործիքակազմերի և ընթացակարգերի ներդրմանն ու կիրառմանը,

զ) պլանավորվող վերապատրաստումների համար նախապատրաստում է համապատասխան փաթեթներ,

է) կրթության որակի ապահովման գործընթացների շրջանակում իրականացնում է թարգմանություններ,

ը) կատարում է Կենտրոնի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարություններ, որոնք չեն հակասում սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված իրավական փաստաթղթերի սկզբունքներին,

թ) կազմում է հաշվետվություններ,

ժ) հաշվետու է Կենտրոնի ղեկավարին:

Կենտրոնի ավագ մասնագետը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ առնվազն բակալավրի աստիճանով:

### **Կենտրոնի հաշվետվողականությունը**

18. Կենտրոնի ղեկավարը տարին առնվազն մեկ անգամ կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցում է ռեկտորատում կամ գիտական խորհրդում:

19. Կենտրոնը կատարված հետազոտությունների արդյունքները պարբերաբար ներկայացնում է ռեկտորին, համապատասխան ոլորտը համակարգող պրոռեկտորներին, դեկաններին և այլն:

20. Կատարված հետազոտությունների արդյունքները, վեր հանված խնդիրները տեղ են գտնում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի գիտական խորհրդում ներկայացվող տարեկան հաշվետվություններում:

21. Կենտրոնի ղեկավարը կատարված աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդում:

22. Ի պատասխան հարցումների Կենտրոնը տեղեկատվություն է հավաքագրում և ներկայացնում արտահամալսարանական որոշ կառույցների (ՈԱԱԿ, ՀՀ ԿԳՆ ԿՏԱԿ և այլն)

### **Եզրափակիչ դրույթներ**

23. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումներն ընդունվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից և հաստատվում ռեկտորի հրամանով:

24. Կենտրոնի վրա չեն կարող դրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին հակասող պարտականություններ:

25. Կենտրոնի գործունեությունը կարող է դադարեցվել, Կենտրոնը կարող է վերակառուցվել, ինչպես նաև լիազորությունները կարող են ավելացվել կամ պակասեցվել ռեկտորի նախաձեռնությամբ՝ Գիտական խորհրդի կողմից:

